

ԵՎԳԵՆԻԱ ԶԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Նոգեբանական գիտությունների թեկնածու

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԿԱՆՈՒՄԸ ՄԱՆՎԱՆ ԵՎ ՆՈԳՈՒ ՆԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մարդկային հոգեբանության հետաքրքիր և չբացահայտված խնդիրներից է մահվան հանդեպ վերաբերմունքը:

Տարբեր ժամանակաշրջաններում մարդկային միտքն անդրադարձել է մահվան ընկալմանն ու դրա հետ կապված խնդիրներին: Հետաքրքիրն այն է, որ թե՛ անհատները, թե՛ հասարակությունները և թե՛ քաղաքակրթություններն այս հարցին անդրադառնում են հատկապես անկայուն վիճակներում՝ պատերազմների և համաճարակների ժամանակ, ներքին անբավարարվածության կամ մերժվածության զգացողության և համանման պարագաներում:

Առաջին անգամ քրիստոնեական Եվրոպան վախճանաբանական (էսխատոլոգիական) ցնցում ապրեց 7-րդ դարում, իսկ Հայաստանը՝ 10-րդ դարից սկսած: Եվ դա պատահական չէր: Կապված 666-ի թվային խորհրդանշի հետ՝ բազմաթիվ ավերիչ պատերազմներից հոգնած և ուժասպառ Եվրոպան հենց այդ թվականին սպասում էր մարդկության վերջին և Քրիստոսի Երկրորդ Գալստյանը, իսկ հետագայում, չարդարացված սպասելիքները կրկին ուժի մեջ մտան 999 թ.՝ 666-ի հայելային արտացոլման ըմբռնմամբ, որոնք իրենց անդրադարձն ունեցան մահ 1666, ապա և 1999 թվականներին: Թերևս դրանով են բացատրվում վերջին 40-50 տարիների ընթացքում մահվանն ու հանդերձյալ կյանքի ընկալման խնդիրներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններն ու դրանց մկատմամբ հասարակության աշխույժ հետաքրքրությունը: Այսօր էլ մեր անհատական ու հավաքական վարքագիծն ու մրա հմարավոր հետևանքներն էապես կախված են այն բանից, թե ինչպես ենք մենք ընկալում մահը և ինչպես ենք տեսնում մեր հոգու փրկության հմարավորությունները:

Խոշոր հաշվով մարդկությունն անցել է մահվան ընկալման հիմզ հիմնական փուլ: «Վարժեցված» մահվան շրջանում, որ վերաբերում է հիմ մշակույթներին՝ Հնդկաստանին, Եգիպտոսին, մասամբ Հուսաստանին ու Հռոմին, մարդը չէր սարսափում իր վախճանից, քանի որ հավատում էր հոգու վերամարմնավորմանը: Քրիստոնեության ընդունումից հետո բնականաբար փոխվեց և վերաբերմունքը մահվան մկատմամբ, վերջինս ընկալվեց որպես «իմ մահ» կամ անձնական մահ, համաձայն որի մարդն ազատ է Աստծո առաջ և, որքան պարկեշտ կյանք վարի, այնքան ավելի մեծ է երկնային երանությանն արժանանալու հավանականությունը:

Երրորդ փուլը երկրորդի կատարելագործված տարբերակն է և բնութագրվում է որպես «աստվածային մահ»: Դա էր պատճառը, որ միջնադարյան մարդը, ապրելով «մահվան

հետ», չունեն վախի և սարսափի զգացում (վախը միայն մտահոգությունն էր հոգու հետագա «վիճակի» մասին), և ըստ տարբեր աղբյուրների վկայությամբ՝ սիրահարները հաճախ հանդիպում էին գիշերով, գերեզմանոցում: Այս անմիջական կապը հանգուցյալների և անդրշիրիմյան կյանքի հետ ոչ մեկին չէր վախեցնում, և հաճախ թաղումներն էլ կատարվում էին տեղում, տան բակերում (մեր օրերում դա կընկալվի որպես անպատկերացելի երևույթ, անգամ՝ սրբապաշտություն): Չորրորդ փուլը բնութագրվում է որպես «քո մահ», երբ մերձավորի մահն ավելի սարսափելի է ազդում, քան սեփական մահվան պատկերացումը: Բավական է հիշել օրինակներ գրականությունից՝ թեկուզ «Ռոմեոյի և Ջուլիետի» պատմությունը: Եվ, վերջապես, հիմնգերող փուլն այսօրվա մարդու մոտեցումն է մահվանը, որ հաճախ զուրկ է ընկալումից՝ առանձնապես «քաղաքակրթված» հասարակություններում, ուր մահվանը երբեմն վերաբերվում են սոսկ որպես վիճակագրական, «բժշկական» իրողություն:

Միաժամանակ, ընդունելով մահը որպես ի վերուստ տրված անխուսափելիություն՝ մարդու գիտակցությունը շարունակ ընդդիմանում է, որի արդյունքում՝ հասարակության ողջ պատմության ընթացքում ձևավորվել է հակադրության ընդամենը երկու եղանակ. մահվան իդեալականացում (որը բնորոշ է գրեթե բոլոր կրոններից սերված առանձին աղանդներին) և մահվան մերժում կամ անտեսում:

Քննելով մահը որպես հոգեբարոյական երևույթ՝ հարկ է անդրադառնալ այս խնդրում երկու կարևորագույն հասկացության՝ ժամանակի և տարածության ընկալմանը:

Համաձայն տարածված կարծիքի՝ մահը կրում է հավերժության իմաստ, այդուհանդերձ ծավալվելով միայն ժամանակի մեջ: Այդպիսով, «ամնահություն» բառը կարող է ամհեթեթ թվալ, քանզի ժխտում է բուն մահվան փաստը: Մահը գոյության ամենաէական չափանիշն է, որը կարևորում է կյանքի իմաստը: Եթե չկա վերջ, ապա իմաստագրվում է հավերժության գաղափարը, որ ընկալվում է ներփակ աշխարհի սահմաններից դուրս և, բնականաբար, ենթադրում է ավարտ իրական աշխարհում: Մահն ամիմաստ ժամանակից դեպի հավերժություն դուրս գալու միակ ելքն է:

Մահվան անհրաժեշտությունը կարելի է պատճառաբանել՝ ժամանակն ու տարածությունն ամբողջությամբ կենտրոնացնելու անհնարինությանը: Երբ ժամանակի մեջ մենք կորցնում ենք մերձավորներին, կամ տարածության մեջ հեռանում հարազատ դարձած մյուսական երևույթներից՝ դա արդեն մահվան զգացողություն է, մահվան փորձ՝ այս կյանքի սահմաններում: Իսկ մահվան մկատմամբ մարդկային վախը վկայում է, որ մենք գտնվում կամ ապրում ենք միաժամանակ և՛ ժամանակի, և՛ հավերժության մեջ: Եվ վիշտը, որ պատճառում է մեզ հարազատի կորուստը, ժամանակի և հավերժության միջև անդունդի խորացումն ու ընդարձակումն է: Միաժամանակ, մահը ոչ միայն սարսափ է, այլ մահ հույս:

Այլ խոսքով՝ ժամանակի մեջ անհնար է հավերժության պատկերացումը, իսկ ժամանակի մեջ ավարտի բացակայությունը լիակատար անիմաստություն է: Այսպիսով, քանի որ իմաստը բացահայտվում է հավերժության, այլ ոչ թե անսահման ժամանակի մեջ, ապա մահը կարելի է համարել հիմնաքար կամ կապակցող օղակ՝ ժամանակավոր կյանքի և հավերժական կյանքի միջև:

Մահվան հիմնավորման մասն ակզբունքները երևան եկան քրիստոնեության հետ և ձևավորվեցին ու հաստատվեցին քրիստոնեական գաղափարախոսության բյուրեղացմանը զուգընթաց:

Միջնադարյան մարդն ապրում էր միաժամանակ երկու ժամանակահատվածում՝ անցողիկ կյանքի և ընդլայնված ժամանակի, որը սկսվում էր Արարչագործությանը և ավարտվելու էր Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ: Պատահական չէ, որ հին տարեգրություններում խոսքը զուգորդվում է մե՛րթ ժամանակակից փաստերով, մե՛րթ՝ թոխքածն վերադառնում Նոյյան տապանի պատմությանը և Ադամի ծնունդին, իսկ երբեմն էլ շարադրանքն ավարտվում է ապագա Ահեղ դատաստանի դրվագներով:

Ավելին, միջնադարյան գրականության մեջ հաճախ ներկայացվում է կենդանի մարդկանց շփումը հանգուցյալների հետ: Նույնը կարելի է ասել նաև կերպարվեստի մասին, ուր մի հարթության վրա տեղադրվում են իրարից անկախ ժամանակային իրադարձություններ, կամ միևնույն պատկերում գործող անձը պատկերվում է մի քանի անգամ: Այստեղ մարդը ոչ թե առանձին պատմական անձ է, այլ անցյալի և ապագայի միջև կապող օղակ: Ընդ որում, այդ կապը ոչ թե հաջորդական բնույթ ունի, այլ՝ նույն ժամանակյա:

Հանդերձյալ աշխարհին երկակի մոտեցումը բացատրվում է հակասության մկատմամբ անտարբերությանը, պարադոքսի հանդեպ վախի բացակայությանը և ժամանակի ու հավերժության նույնացմամբ, ուր լիովին անտեսվում է ժամանակը, իսկ անցյալի և ապագայի միջև սահմանների աղոտությունը որակվում է որպես միջնադարյան մարդու հոգեբանության մեջ ժամանակի մերժում:

Միջնադարում ընդունված Երրորդության գաղափարը դարձավ աշխարհընկալման յուրատեսակ մոդել, որը թույլ էր տալիս բացահայտել զգայական և մտավոր տարբեր տարրեր: Տվյալ դեպքում էպիկական Երրորդությունը վերաբերվում է նաև ժամանակին. կար ժամանակի երեք ձև. բնական, որ Աստծո ստեղծածն էր և բնականաբար ենթակա չէր քննության, և երկու եկեղեցական՝ ուղղահայաց և լսարույրաձև: Առաջին եկեղեցական ժամանակը բաժանում էր պատմությունը երկու խոշոր մասի՝ մինչև Քրիստոսի ծնունդը և հետո: Այդ ուղղագիծ ժամանակը, որ սկսվում էր Ադամի ստեղծմամբ և ձգվում մինչև Ահեղ դատաստան, զուգորդվում էր պարույրաձև ժամանակով, որ տարեցտարի կրկնվում էր եկեղեցական Տոնացույցներում՝ Ծնունդից մինչև Խաչելություն:

Այդուհանդերձ, հավերժությունը, որ ընկած էր Արարումից առաջ և Ահեղ դատաստանից հետո, նույնպես ժամանակ էր, միայն ուրիշ՝ անիրական, հավիտենական աշխարհի չափումների մեջ:

Միջնադարյան մարդը սիմվոլիկ մտածելակերպով միավորում էր ժամանակը մի ընդհանուր հասկացության մեջ, որ չկան սահմաններ ոչ միայն անցյալ-ներկա-ապագա հատվածում, այլ նաև նույն հասկացության իրական և տիեզերական կյանքի միջև: Աստիճանաբար հաղթահարվում էր անջրպետը, որ բաժանում էր մյութականն ու հոգևորը, անհետանում էր սահմանն իրականի և հանդերձյալի միջև:

Ինչ վերաբերում է ծավալատարածական ընկալմանը՝ Տիեզերքը բաժանվում էր երկու մասի՝ երկնքի ու երկրի: Միաժամանակ, Աշխարհը միասնություն էր, քանզի արարված էր միակ Աստծո կողմից, և այն ամենը, ինչ շրջապատում էր մարդուն, դրվում էր հիերար-

խիայի համակարգի մեջ, ուր կարևորը բնորոշվում էր Աստծուն մոտ լինելու աստիճանով: Իրականությունն ընկալվում էր ոչ որպես առանձին միավորների կապ, այլ առանձին կտորներով՝ այն բեկորներով, որ առավելապես նկատելի էին և կարևորված: Քանի որ աշխարհն արդեն տրված իրականություն էր, այն դառնում էր վերջինի միավորման կենտրոն:

Առանձնապես հետաքրքիր է այս գաղափարների արտացոլումն արվեստում: Ձևավորվել և տարածում է գտել այն թյուր կարծիքը, թե միջնադարյան ստեղծագործողը զուրկ էր հեռանկարի տարրական ըմբռնումից և այդ իսկ պատճառով իր պատկերներում կիրառում էր ժամանակակից աչքին անսովոր մոտեցումներ: Որ միջնադարյան պատկերը չունի հարթությունների դասական բաժանում՝ գալիս է դարաշրջանի գեղագիտական պատկերացումներից և քրիստոնեական գաղափարախոսությունից:

Համեմատելով նույն երկրաչափական պատկերը միջնադարյան մշակույթում և վերածնունդով պայմանավորված ժամանակակից կերպարային մտածողության մեջ՝ համոզվում ենք, որ երկրորդ տարբերակն ընկալվում է որպես սոսկ արվեստի ստեղծագործություն: Ինչպես թատրոնում է՝ դերասան-վարագույր-հանդիսատես, այստեղ հետևում է պատկեր-շրջանակ-դիտող հաջորդականությունը: Միջնադարյան հակադարձ հեռանկարի դեպքում զգալիորեն փյուզվում է շրջանակի գաղափարը, և դիտողը դառնում է ոչ միայն արտաքին հանդիսատես, այլև տեսողական էֆեկտի շնորհիվ՝ համագործակից, պատկերի համամասնակից:

Բնականաբար, տեսածն ավելի ուժեղ է տպավորվում, քան լսածը: Նկատի ունենալով միջնադարյան մարդու հոգեբանությունն ու եմթարկվածությունը՝ դժվար չէ պատկերացնել այն տպավորությունը, որ կարող էին թողնել նույն Ահել դատաստանի պատկերները: Նման մոտեցումն ավելի անհատական է և եմթադրում է արվեստների ընկալման ավելի նուրբ ձև:

Վախճանաբանական խնդրում տարածությունը, ինչպես և ժամանակը, ընկալվում էր եռակի: Հանդերձյալ կյանքի «աշխարհագրությունն» ընդգրկում էր երեք ոլորտ. դրախտ, դժոխք, իսկ հետագայում՝ նաև քավարան: Դրախտ ընկնում էին ընտրյալները, քավարանում «մաքրվում», ազատվում էին մեղքերից, իսկ դժոխք իջնում էին անդառնալի մեղսագործները:

Դժոխքի իմաստն ավելի շուտ կապվում է անձի և ընտրության իրավունքի հետ, քան արդարության և հատուցման: Այն մարդկային հոգու և կամքի ազատության բարոյական կանխադրույթն է: Մարդ դժոխքի «ընտրության» հարցում լիակատար ազատություն ունի:

Դժոխքի նկատմամբ տածվող վախի ու սարսափի զգացումը կարող է սասանել հավատն Աստծո նկատմամբ: Պետք է անմնացորդ մվիրումով հավատալ Աստծուն, այլ ոչ թե վախենալ դժոխքից, այլապես սերն առ Արարիչ մարում է:

Փորձենք քննել դժոխքը երկու տեսանկյունով՝ Աստծո և մարդու: Եթե ողջը ստեղծված է Նրա կողմից, ինչպե՞ս Նա կարող է հանդուրժել հավերժական տանջանքները: Դա կարող է դիտվել իբրև Արարչագործության թերություն և այս պարագայում հակասում է իր կերպարով և իր նմանությանը ստեղծվածի հանդեպ ողորմածության վեհ գաղափարին: Ուրեմն՝ դժոխքի նյութականացված պատկերացումն ինքնին հակասատվածային է:

Պատկերը, սակայն, փոխվում է, երբ դժոխքին մոտենում ես անհատի տեսանկյունից: Դժոխքը պայմանավորված է միայն մարդկային կենսափորձով, երբ այն առարկայանում և հաստատվում է Աստծուց դեպի Աստված անցման ճանապարհում, այլ ոչ թե՝ մարդուց դեպի մարդ: Դժոխքը ոչ թե առարկայական, այլ ենթակայական էություն է, իսկ քանի որ մարդը ներփակված է իր մեջ, մա չի կարող անցնել հավերժության սահմանը: Այսպիսով, դժոխքը ոչ թե հավերժություն է, այլ ժամանակի մեջ անվերջ շարունակելիություն, քանի չկա այլ հավերժություն, քան Աստծո Արքայությունն է: Դժոխքում միայն նրանք են, ովքեր գտնվում են մեղ անձնական սահմաններում և անկարող են անցնել Աստծո առարկայական ոլորտը: Դժոխային տառապանքները հավերժության մեջ չեն, այլ երկարատև՝ մարդու կողմից հավերժության հետ մուկնացվող ժամանակահատվածում:

Մահվան սարսափը վերջինը չէ, դրան հետևում է դժոխքի սարսափը: Մահվան սարսափը կյանքի այս կողմում է, քանի որ մահը հենց կյանքի ամենադաժան փորձությունն է, իսկ դժոխային տառապանքների դեմ հաղթանակը կարող է իրականանալ միայն Բրիստոսին հավատալով, այլ պարագայում այն կա՛մ անհավատություն է, կա՛մ ծառայություն սատանային: